

*ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ*

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ստեղծման ընդհանուր դրույթները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1638/2006 (ԵՀ) կանոնակարգ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 179-րդ և 181-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն [1],

Քանի որ

- 1) Համայնքի կողմից տրամադրող արտաքին օժանդակությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է օժանդակության պլանավորման և տրամադրման նոր շրջանակ: Սույն Կանոնակարգը Եվրոպական միության արտաքին քաղաքականության իրականացման ապահովմանն ուղղակիորեն նպաստող հիմնական գործիքներից է,
- 2) 2002 թվականի դեկտեմբերի 12-ին և 13-ին Կոպենհագենում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպմանը վերահաստատվեց, որ Եվրոպական միության ընդլայնումը կարևոր նշանակություն ունեցող հնարավորություն է հարևան երկրների հետ հարաբերությունները զարգացնելու համար՝ հիմնված քաղաքական և տնտեսական ընդհանուր արժեքների վրա, և որ Եվրոպական միությունը շարունակում է հաստատակամ մնալ Եվրոպայում նոր բաժանարար գծերից խուսափելու և Եվրոպական միության նոր սահմանների ներսում ու դրանցից դուրս կայունություն և բարգավաճում ապահովելու հարցում,
- 3) 2004 թվականի հունիսի 17-ին և 18-ին Բրյուսելում կայացած հանդիպմանը Եվրոպական խորհուրդը վերստին կարևորեց այդ հարևանների հետ համագործակցության ամրապնդումը՝ գործընկերության և համատեղ սեփականության, ինչպես նաև ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր արժեքների հիման վրա,
- 4) Եվրոպական միության և հարևան երկրների միջև արտոնյալ հարաբերությունները պետք է հիմնված լինեն ընդհանուր արժեքներին, այդ թվում՝ ժողովրդավարությանը, իրավունքի գերակայությանը, պատշաճ կառավարմանը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին, ինչպես նաև շուկայական տնտեսության սկզբունքներին, բաց, կանոնակարգված և արդար առևտրին, կայուն զարգացմանն ու աղքատության հաղթահարմանը նվիրվածության վրա,

5) կարևոր նշանակություն ունի այն, որ սույն Կանոնակարգի շրջանակներում Համայնքի կողմից օժանդակությունը տրամադրվի Համայնքի, անդամ պետությունների և գործընկեր երկրների մասնակցությամբ գործող միջազգային համաձայնագրերին և կոնվենցիաներին համապատասխան, և որ այդ օժանդակությունը ցուցաբերվի՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները, որոնք ընդհանուր առմամբ ընդունելի են կողմերի համար,

6) Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում պայմանագրային հարաբերությունների համար հիմք են հանդիսանում գործընկերության և համագործակցության համաձայնագրերը: Միջերկրական ծովի ավազանի երկրներում Եվրոպական միջերկրածովյան գործընկերությունը (Բարսելոնայի գործընթաց) ապահովում է համագործակցության տարածաշրջանային շրջանակ, և դրան լրացնում են գործակցության մի շարք համաձայնագրեր,

7) Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրոպական միության և գործընկեր երկրների կողմից համատեղ սահմանվել են մի շարք գերակայություններ, որոնք պետք է ընդգրկվեն համատեղ համաձայնեցված գործողությունների ծրագրերում՝ ներառելով կոնկրետ գործողությունների անհրաժեշտություն ունեցող առանցքային մի շարք ոլորտներ, այդ թվում՝ քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ, առևտրի և տնտեսության բարեփոխումներ, արդարության սկզբունքների վրա հիմնված սոցիալ-տնտեսական զարգացում, արդարադատություն և ներքին գործեր, էներգետիկա, տրանսպորտ, տեղեկատվական հասարակություն, շրջակա միջավայր, հետազոտություններ և նորարարություններ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության զարգացում և միջանձնային հարաբերություններ: Այս գերակայությունների իրականացման հարցում արձանագրված առաջընթացը կնպաստի գործընկերության և համագործակցության համաձայնագրերով և գործակցության համաձայնագրերով ընձեռված հնարավորությունների լիարժեք իրագործմանը,

8) ընդհանուր արժեքներին և սկզբունքներին գործընկեր երկրների նվիրվածությունն ամրապնդելու և նրանց կողմից գործողությունների ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով Համայնքը պետք է պատրաստ լինի օժանդակություն տրամադրել այդ երկրներին, և խրախուսել նրանց միջև, ինչպես նաև նրանց և անդամ պետությունների միջև տարբեր ձևաչափերով համագործակցությունը՝ ուղղված ընդհանուր կայունության, անվտանգության և բարգավաճման գոտու ստեղծմանն ու զարգացմանը՝ տնտեսական ինտեգրման և քաղաքական համագործակցության նշանակալի մակարդակով,

9) Համայնքի կողմից տրամադրվող օժանդակության կարևոր նպատակներից է հարևան երկրներում քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումների խթանումը: Միջերկրական ծովի ավազանի երկրներում այս նպատակի հետագա իրականացումը կկատարվի Միջերկրածովյան երկրների ու Միջին Արևելքի հետ ռազմավարական գործընկերության միջերկրածովյան ուղղության շրջանակներում:

Միջերկրական ծովի ավազանի երկրների՝ հյուսիսային Աֆրիկայում գտնվող հարևանների հետ հարաբերություններում հաշվի կառնվեն Աֆրիկայի նկատմամբ Եվրոպական միության ռազմավարության համապատասխան բաղադրիչները,

10) կարևոր է, որ զարգացող հարևան երկրներին՝ Եվրոպական հարևանության քաղաքականությամբ հաստատված շրջանակներում տրամադրվելիք աջակցությունը համաձայնեցված լինի Եվրոպական համայնքի զարգացման քաղաքականության նպատակների ու սկզբունքների հետ, որոնք ձևակերպված են 2005 թվականի դեկտեմբերի 20-ին Խորհրդի, Եվրոպական պառլամենտի և Հանձնաժողովի շրջանակներում հանդիպող անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների և Խորհրդի կողմից ընդունված՝ «Զարգացման շուրջ Եվրոպական փոխհամաձայնություն» [2] վերտառությամբ Համատեղ հայտարարության մեջ,

11) Եվրոպական միությունը և Ռուսաստանը որոշել են իրենց կոնկրետ ռազմավարական գործընկերությունը զարգացնել չորս ընդհանուր ուղղություններ սահմանելու միջոցով, և Համայնքի աջակցությունը կօգտագործվի այս գործընկերության զարգացմանը նպաստելու և Ռուսաստանի ու նրա հարևան՝ Եվրոպական միության անդամ պետությունների սահմաններին միջսահմանային համագործակցությունը խթանելու նպատակով,

12) «Հյուսիսային ուղղվածություն» նախաձեռնությամբ Եվրոպական միության, Ռուսաստանի, Նորվեգիայի և Իսլանդիայի միջև համագործակցության համակարգ է ստեղծվում, և այդ համակարգով նախատեսվող միջոցառումների իրականացմանը նպաստող աշխատանքների խթանման հարցում կարևոր նշանակություն ունի նաև Համայնքի աջակցության օգտագործումը: Այս քաղաքականության նոր նպատակները կձևակերպվեն քաղաքական հռչակագրում և քաղաքականության շրջանակային փաստաթղթում, որոնք պետք է պատրաստվեն 2005 թվականի նոյեմբերի 21 -ին «Հյուսիսային ուղղվածության» երկրների նախարարների մակարդակով հանդիպմանը հաստատված ուղեցույցի հիման վրա,

13) Միջերկրական ծովի ավազանի գործընկեր երկրների դեպքում օժանդակության տրամադրումն ու համագործակցությունը պետք է իրականացվեն Եվրոպական միջերկրածովյան գործընկերության շրջանակներում, որը ստեղծվել է 1995 թվականի նոյեմբերի 28-ի «Բարսելոնայի հռչակագրով» և վերահաստատվել 2005 թվականի նոյեմբերի 28-ին կայացած Եվրոպական միջերկրածովյան գործընկերության 10-րդ հորեյանական գագաթաժողովում, և պետք է հաշվի առնվի այդ համատեքստում ձեռք բերված համաձայնությունը, որը վերաբերում է մինչև 2010 թվականն ապրանքների ազատ առևտրի տարածք ստեղծելուն ու անհամաչափ ազատականացման գործընթաց սկսելուն,

14) կարևոր է խթանել համագործակցությունը Եվրոպական միության արտաքին սահմաններում, ինչպես նաև գործընկեր, հատկապես՝ աշխարհագրորեն միմյանց մոտ գտնվող երկրների միջև,

15) նոր բաժանարար գծերի առաջացումից խուսափելու նպատակով հատկապես կարևոր է Եվրոպական միության արտաքին սահմաններում արդյունավետ

միջսահմանային համագործակցության խոչընդոտների վերացումը: Միջսահմանային համագործակցությունը պետք է նպաստի սահմանակից տարածքների միջև ինտեգրված և կայուն տարածաշրջանային զարգացմանը, ինչպես նաև Համայնքի և հարևան երկրների միջև տարածքային ներդաշնակ ինտեգրմանը: Այս նպատակը կարող է լավագույնս իրագործվել՝ արտաքին քաղաքականության նպատակները համադրելով շրջակա միջավայրի տեսանկյունից շարունակական՝ սոցիալ-տնտեսական համախմբված մոտեցման հետ,

16) հարևան գործընկեր երկրներին իրենց նպատակների իրագործման, ինչպես նաև նրանց և անդամ պետությունների միջև համագործակցության խթանման հարցում օժանդակություն ցուցաբերելու նպատակով ցանկալի է մշակել վարվող քաղաքականությունից բխող միասնական գործիք, որը կփոխարինի գոյություն ունեցող մի շարք գործիքները՝ դրանով իսկ ապահովելով միասնականությունը և պարզեցնելով օժանդակության ծրագրերի մշակումն ու կառավարումը,

17) այդ գործիքով նաև պետք է օժանդակություն տրամադրվի գործընկեր երկրների և անդամ պետությունների միջև միջսահմանային համագործակցությանը՝ հանգեցնելով կառավարման մեկ միասնական գործակառույցի և միասնական ընթացակարգերի միջոցով արդյունավետության մասով զգալի ձեռքբերումների: Այն պետք է հիմնված լինի 2004-2006 թվականներն ընկած ժամանակահատվածում Հարևանության ծրագրերի իրականացման շրջանակում ձեռք բերված փորձի վրա և կիրառվի այնպիսի սկզբունքների հիման վրա, ինչպիսիք են բազմամյա ծրագրերի մշակումը, գործընկերությունը և համաֆինանսավորումը,

18) կարևոր է նաև այն, որ Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏՏ) երկրներին պատկանող և ներկայումս անդամ պետությունների ու գործընկեր երկրների միջսահմանային համագործակցությանը մասնակցող սահմանային տարածքները կարողանան շարունակել իրենց համագործակցությունն իրենց իսկ ռեսուրսներով,

19) սույն Կանոնակարգը 2007-2013 թվականներն ընկած ժամանակահատվածի համար սահմանում է ֆինանսական փաթեթ, որով սահմանվում է բյուջետային հարցերով պատասխանատու մարմնի համար հիմնական ելակետային գումարը՝ համաձայն Եվրոպական պառլամենտի, Խորհրդի և Հանձնաժողովի միջև բյուջետային կարգապահության և արդյունավետ ֆինանսական կառավարման մասին միջինստիտուցիոնալ համաձայնագրի 37-րդ կետի,

20) սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման կարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն,

21) կառավարման ընթացակարգը պետք է կիրառվի միջսահմանային համագործակցության իրականացումը կանոնակարգող՝ իրականացմանն ուղղված կանոնները սահմանելիս, ինչպես նաև ռազմավարության փաստաթղթեր, գործողությունների ծրագրեր և ռազմավարության փաստաթղթերով չնախատեսվող

հատուկ միջոցներ մշակելիս, որոնց արժեքը գերազանցում է 10 000 000 եվրո սահմանաչափը,

22) քանի որ սույն Կանոնակարգի նպատակները, մասնավորապես՝ Եվրոպական միության և հարևան երկրների միջև սերտ համագործակցությունը և աստիճանական տնտեսական ինտեգրումը խթանելու նպատակները չեն կարող բավարար կերպով իրագործվել անդամ պետությունների կողմից, և գործողության մասշտաբի պատճառով կարող են առավել արդյունավետ իրագործվել Համայնքի մակարդակով, ապա Համայնքը կարող է, Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված լրացուցչության սկզբունքի համաձայն, ընդունել ակտեր: Այդ հոդվածով նախատեսվող համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներն իրագործելու համար,

23) սույն Կանոնակարգով անհրաժեշտություն է առաջանում ուժը կորցրած ճանաչել «Միջերկրական ծովի ավազանի ոչ անդամ պետությունների հետ Համայնքի կողմից կնքված ֆինանսական և տեխնիկական համագործակցության մասին արձանագրությունների կատարման մասին» Խորհրդի 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 1762/92/ԵՏՀ կանոնակարգը [5], «Արևմտյան Ափի և Գազայի հատվածի հետ ֆինանսական և տեխնիկական համագործակցության մասին» 1994 թվականի հուլիսի 11-ի թիվ 1734/94/ԵՀ կանոնակարգը [6] և «Եվրամիջերկրածովյան գործընկերության շրջանակում տնտեսական և սոցիալական կառուցվածքների բարեփոխմանն ուղեկցող ֆինանսական և տեխնիկական միջոցների մասին» 1996 թվականի հուլիսի 23-ի թիվ 1488/96/ԵՀ կանոնակարգը [7]: Սույն կանոնակարգը հավասարապես կփոխարինի «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գործընկեր պետություններին օժանդակություն տրամադրելու մասին» Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 99/2000 (ԵՀ, Եվրատոմ) կանոնակարգը, որի գործողության ժամկետը լրանում է 2006 թվականի դեկտեմբերի 31-ին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԲԱԺԻՆ 1

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգով սահմանվում է Հարևանության և գործընկերության գործիք, որով կտրամադրվի Համայնքի օժանդակություն՝ Եվրոպական միությունը և Հավելվածում թվարկված երկրներն ու տարածքները (այսուհետ՝ գործընկեր երկրներ) ընդգրկող բարգավաճման և լավ հարևանության տարածք ստեղծելու նպատակով:

2. Համայնքի օժանդակությունը տրամադրվում է ի բարօրություն գործընկեր երկրների: Համայնքի օժանդակությունը կարող է տրամադրվել անդամ պետությունների և գործընկեր երկրների ու դրանց տարածքների համընդհանուր բարօրության համար՝ 6-րդ հոդվածով սահմանված միջսահմանային և միջտարածաշրջանային համագործակցությունը խթանելու նպատակով:

3. Եվրոպական միությունը հիմնված է ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի, իրավունքի գերակայության արժեքների վրա և նպատակ է հետապնդում գործընկեր երկրներում երկխոսության և համագործակցության միջոցով խթանել հավասարմունքային այդ արժեքներին:

## Հոդված 2

Համայնքի կողմից տրամադրվող օժանդակության շրջանակը

1. Համայնքի կողմից տրամադրվող օժանդակությունը պետք է նպաստի Եվրոպական միության և գործընկեր երկրների միջև համագործակցության ակտիվացմանը և աստիճանական տնտեսական ինտեգրմանը, մասնավորապես, գործընկերության և համագործակցության համաձայնագրերի, գործակցության համաձայնագրերի կամ այլ գործող և կնքվելիք համաձայնագրերի իրականացմանը: Այն նաև նպաստում է գործընկեր երկրների՝ պատշաճ կառավարման և սոցիալ-տնտեսական հավասարաչափ զարգացման խթանմանն ուղղված ջանքերի իրականացմանը:

2. Համայնքի կողմից տրամադրվող օժանդակությունն ուղղվում է համագործակցության հետևյալ ոլորտներում միջոցառումների իրականացմանը՝

ա) քաղաքական երկխոսության և բարեփոխումների խթանում.

բ) բոլոր համապատասխան ոլորտներում առավել բարձր չափանիշների հիման վրա օրենսդրական և կարգավորման համապատասխանեցման խթանում՝ մասնավորապես խթանելու ներքին շուկայում գործընկեր երկրների աստիճանական մասնակցությունը և առևտրի ինտենսիվացումը.

գ) սույն հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը ձգտող՝ Համայնքի և (կամ) իր անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև կնքված գործակցության համաձայնագրերով, գործընկերության և համագործակցության համաձայնագրերով և այլ բազմակողմ համաձայնագրերով կարգավորվող ոլորտներում քաղաքականության մշակման ու արդյունավետ իրականացման համար պատասխանատու պետական կառույցների և մարմինների հզորացում.

դ) իրավունքի գերակայության և պատշաճ կառավարման խթանում, ներառյալ՝ պետական կառավարման արդյունավետության և դատական իշխանության անկողմնակալության ու արդյունավետության բարձրացում և կոռուպցիայի ու խարդախության դեմ պայքարին աջակցություն.

ե) բոլոր առումներով կայուն զարգացման խթանում.

զ) գյուղական, ինչպես նաև քաղաքային վայրերում տարածքային և տեղական զարգացմանն ուղղված ջանքերի գործադրում՝ նվազեցնելու անհամաչափություններն ու բարելավելու տարածքային և տեղական զարգացման կարողությունները.

է) շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանության և բնական ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ ջրերի և ծովային ռեսուրսների կայուն կառավարման խթանում.

ը) աղքատության հաղթահարման քաղաքականության իրականացմանն ուղղված աջակցություն՝ օգնելու իրագործել ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակները.

թ) աջակցություն սոցիալական զարգացմանը, սոցիալական ներգրավվածությանը, գենդերային հավասարությանը, խտրականության բացառմանը, զբաղվածությանը և սոցիալական պաշտպանությանը՝ ներառյալ միգրանտ աշխատողների պաշտպանությունը, սոցիալական երկխոսություններին և արհեստակցական միությունների իրավունքների և հիմնական աշխատանքային նորմերի, ներառյալ երեխաների աշխատանքային նորմերի պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացմանը.

ժ) առողջապահությանը, կրթությանը և վերապատրաստմանն ուղղված քաղաքականության իրականացմանն աջակցություն, ներառյալ ոչ միայն հիմնական վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և խանգարումների դեմ պայքարին ուղղված միջոցառումներ, այլ նաև առողջապահության, այդ թվում կանանց և աղջիկների համար վերարտադրողական խնդիրների և երեխաների առողջության հետ կապված ծառայությունների և դասընթացների մատչելիություն.

ժա) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ներառյալ կանանց և երեխաների իրավունքների խթանում և պաշտպանություն.

ժբ) ժողովրդավարացման գործընթացին աջակցություն, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերի և լրատվամիջոցների բազմակարծության խթանման, ինչպես նաև ընտրությունների ընթացքում դիտորդական գործունեության և աջակցության միջոցով.

ժգ) քաղաքացիական հասարակության, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների զարգացման խթանում.

ժդ) շուկայական տնտեսության զարգացման խթանում, ներառյալ մասնավոր հատվածին օժանդակելուն և փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ ներդրումները խրախուսելու և համաշխարհային առևտուրը խթանելու նպատակով.

ժե) էներգետիկայի, հեռահաղորդակցության և տրանսպորտի ոլորտներում համագործակցության խթանում, ներառյալ կապի, ցանցերի և դրանց աշխատանքի շուրջ, միջազգային տրանսպորտի և էներգետիկայի ոլորտի աշխատանքների ապահովության և անվտանգության բարձրացում և էներգիայի վերականգնվող աղբյուրների ստեղծման, էներգետիկ արդյունավետության և էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոցների ստեղծման խթանում.

ժզ) քաղաքացիների համար սննդամթերքի, մասնավորապես սանիտարական և բուսասանիտարական ոլորտներում, անվտանգության բարձրացմանն ուղղված գործողությունների հարցում աջակցության տրամադրում.

ժէ) սահմանների արդյունավետ և անվտանգ կառավարման ապահովում.

ժը) արդարադատության և ներքին գործերի ոլորտում բարեփոխումների խթանում ու կարողությունների հզորացում, ներառյալ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ապաստանը, միգրացիան և հետընդունումը, մարկանց առևտրի, ահաբեկչության և կազմակերպված հանցավորության, այդ թվում դրանց ֆինանսավորման, հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման և հարկային կեղծարարության դեմ պայքարը և կանխարգելումը.

ժթ) վարչական մարմինների համագործակցության խթանում՝ բարձրացնելու հարկման ոլորտում թափանցիկությունը և նպաստելու տեղեկատվության փոխանակմանը՝ հարկերից խուսափելու (օրինական կամ ապօրինի ճանապարհներով) դեմ պայքարելու նպատակով.

ի) Համայնքի գիտահետազոտական և նորարարական աշխատանքներին մասնակցության խթանում.

իա) անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև բարձրագույն կրթության, ինչպես նաև ուսուցիչների, հետազոտողների և ուսանողների շարժունակության ոլորտում համագործակցության խթանում.

իբ) տարբեր մշակույթների միջև երկխոսության, միջանձնային հարաբերությունների խթանում, ներառյալ անդամ պետություններում բնակություն հաստատած ներգաղթյալների համայնքների հետ կապերի խթանում, քաղաքացիական հասարակության, մշակութային հաստատությունների հետ համագործակցություն և երիտասարդների փոխանակումներ.

իգ) պատմամշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված համագործակցության խթանում և դրա զարգացման ներուժի խթանում՝ ներառյալ զբոսաշրջության միջոցով.

իդ) Համայնքի կողմից իրականացվող ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին գործընկեր երկրների մասնակցության խթանում.

իե) համատեղ տեղական նախաձեռնությունների միջոցով միջսահմանային համագործակցության խթանում՝ նպաստելու համար կայուն տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի զարգացմանը սահմանամերձ տարածքներում և Համայնքի արտաքին սահմաններում տարածքային ինտեգրված զարգացմանը.

իզ) տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցության և ինտեգրման խթանում, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, այն երկրների հետ, որոնք սույն Կանոնակարգի համաձայն չեն կարող հավակնել Համայնքի օժանդակությանը.

իէ) հետձգնաժամային իրավիճակներում աջակցության ցուցաբերում, ներառյալ աջակցություն փախստականներին և տեղահանված անձանց, ինչպես նաև օժանդակություն աղետներին պատրաստվածության գործում.

իը) ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող միջոցառումների և աշխատանքների մասով գործընկեր երկրների միջև հաղորդակցման խրախուսում և փոխանակման խթանում.

իթ) փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում ընդհանուր թեմատիկ մարտահրավերների և սույն Կանոնակարգի գործողության ոլորտին համապատասխան ցանկացած այլ նպատակի արձագանքում:

### Հոդված 3

#### Քաղաքականության շրջանակը

1. Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը, գործակցության համաձայնագրերը և գործընկեր երկրների միջև հարաբերություններ հաստատող գործող կամ կնքվելիք այլ համաձայնագրերը, ինչպես նաև Եվրոպական միության՝ այդ երկրների նկատմամբ քաղաքականության համար ուղեցույցներ սահմանող Հանձնաժողովի համապատասխան հաղորդագրությունները և Խորհրդի եզրակացությունները նախատեսում են քաղաքականության ընդհանուր շրջանակ՝ սույն Կանոնակարգի համաձայն Համայնքի կողմից տրամադրվող օժանդակության ծրագրավորման համար: Համայնքի օժանդակության գերակայությունների սահմանման համար հիմք են հանդիսանում համատեղ համաձայնեցված գործողությունների ծրագրերը կամ այլ համանման փաստաթղթերը:

2. Եթե Եվրոպական միության և գործընկեր երկրների միջև գոյություն չունի 1-ին պարբերությամբ նշված որևէ համաձայնագիր, Համայնքի օժանդակությունը կարող է տրամադրվել Եվրոպական միության քաղաքականության նպատակները հետապնդելու գործում օգտակար լինելու դեպքում, և այդ օժանդակությունը ծրագրավորվում է նշված նպատակների հիման վրա:

### Հոդված 4

Փոխլրացումը, գործընկերությունը և համաֆինանսավորումը

1. Սույն Կանոնակարգի համաձայն Համայնքի տրամադրած օժանդակությունը սովորաբար փոխարկացնում կամ նպաստում է համապատասխան ազգային, տարածքային կամ տեղական մակարդակով նախաձեռնվող ռազմավարություններին և միջոցառումներին:

2. Սույն Կանոնակարգի համաձայն Համայնքի տրամադրած օժանդակությունը սովորաբար սահմանվում է Հանձնաժողովի և շահառուների միջև գործընկերության շրջանակներում: Գործընկերությունը, ըստ անհրաժեշտության, ստեղծվում է ազգային, տարածքային և տեղական մարմինների, տնտեսական և սոցիալական գործընկերների, քաղաքացիական հասարակության և այլ համապատասխան մարմինների միջև:

3. Շահառու երկրները ծրագրերի և նախագծերի մշակման, իրականացման և դիտանցման գործում, անհրաժեշտության դեպքում, ներգրավում են տվյալ տարածքային մակարդակում համապատասխան գործընկերներին՝ մասնավորապես տարածքային և տեղական մակարդակով:

4. Սույն Կանոնակարգի համաձայն Համայնքի տրամադրած օժանդակությունը սովորաբար համաֆինանսավորվում է շահառու երկրների կողմից պետական միջոցների, շահառուների տրամադրած օժանդակության հաշվին կամ այլ աղբյուրներից: Համաֆինանսավորման պահանջները կարող են չկիրառվել պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում, երբ անհրաժեշտ է նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը և օժանդակել ոչ պետական սուբյեկտներին մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանմանն ու ժողովրդավարացմանն ուղղված միջոցառումների իրականացման գործում:

## Հոդված 5

### Հետևողականությունը, համատեղելիությունը և համակարգումը

1. Սույն Կանոնակարգի շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերն ու նախագծերը պետք է համապատասխանեն Եվրոպական միության քաղաքականությանը: Դրանք պետք է համապատասխանեն գործընկեր երկրների հետ Համայնքի և իր անդամ պետությունների կողմից կնքված համաձայնագրերին և պահպանեն նրանց մասնակցությամբ գործող բազմակողմ համաձայնագրերով և միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները, ներառյալ մարդու իրավունքների, ժողովրդավարության և պատշաճ կառավարման մասով պարտավորությունները:

2. Հանձնաժողովը և անդամ պետություններն ապահովում են սույն Կանոնակարգի ներքո տրամադրվող Համայնքի օժանդակության և Համայնքի ու անդամ պետությունների կողմից այլ ներքին և արտաքին ֆինանսական գործիքների միջոցով տրամադրվող ֆինանսական օժանդակության, ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) կողմից տրամադրվող օժանդակության միջև համապատասխանությունը:

3. Հանձնաժողովն ու անդամ պետություններն ապահովում են իրենց համապատասխան օժանդակության ծրագրերի համակարգումը՝ արտաքին օժանդակության ոլորտում աշխատանքների համակարգումն ամրապնդելու և քաղաքականությունն ու ընթացակարգերը ներդաշնակեցնելու նպատակով մշակված ուղեցույցին համապատասխան օժանդակության տրամադրման գործում տնտեսական և նպատակային արդյունավետության բարձրացման համար: Համակարգումը ներառում է օժանդակության ցիկլի տարբեր փուլերում, մասնավորապես կոնկրետ ոլորտին ուղղված դեպքերում, պարբերաբար անցկացվող խորհրդակցություններ և համապատասխան տեղեկատվության հաճախակի փոխանակումներ, և կարևոր քայլ է հանդիսանում անդամ պետությունների ու Համայնքի կողմից ծրագրերի մշակման գործում:

4. Հանձնաժողովն անդամ պետությունների հետ համատեղ ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր՝ բազմակողմ և տարածաշրջանային կազմակերպությունների և սուբյեկտների, ինչպես օրինակ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների, Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունների, հիմնադրամների և ծրագրերի, ինչպես նաև ոչ ԵՄ դոնորների հետ աշխատանքների պատշաճ համակարգումն ու համագործակցությունն ապահովելու նպատակով:

## ԲԱԺԻՆ II

### ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

#### Հոդված 6

#### Ծրագրերի տեսակները

1. Սույն Կանոնակարգի համաձայն Համայնքի օժանդակությունն իրականացվում է՝

ա) մեկ կամ մի շարք երկրներ ներառող, ինչպես նաև միջսահմանային ռազմավարության փաստաթղթերի և 7-րդ հոդվածում նշված բազմամյա ինդիկատիվ ծրագրերի միջոցով, որոնք ներառում են՝

i) մեկ կամ մի քանի երկրներին ուղղված ծրագրեր, որոնք առնչվում են մեկ գործընկեր երկրին ուղղված օժանդակությանը կամ շոշափում են երկու կամ մի քանի գործընկերների միջև տարածաշրջանային և ենթատարածաշրջանային համագործակցությունը, որում կարող են մասնակցել անդամ պետությունները.

ii) միջսահմանային համագործակցության ծրագրեր, որոնք առնչվում են մեկ կամ մի քանի անդամ պետությունների և մեկ կամ մի քանի գործընկեր երկրների միջև համագործակցությանը, որն իրականացվում է Համայնքի արտաքին սահմանի իրենց ընդհանուր հատվածին կից տարածքներում.

բ) 9-րդ հոդվածում նշված՝ միջսահմանային համագործակցությանն ուղղված համատեղ գործառնական ծրագրերի, 12-րդ հոդվածում նշված տարեկան

գործողությունների ծրագրերի և 13-րդ հոդվածում նշված հատուկ միջոցառումների միջոցով:

2. Մի քանի երկրներ ներառող ծրագրերը կարող են ընդգրկել անդրտարածաշրջանային համագործակցությանն ուղղված միջոցառումներ: Սույն Կանոնակարգի նպատակներից էլնելով անդրտարածաշրջանային համագործակցություն նշանակում է համագործակցություն անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև, որն արձագանքում է ընդհանուր մարտահրավերներին, բխում է նրանց համընդհանուր շահերից և իրականացվում է անդամ պետությունների և գործընկեր երկրների տարածքի ցանկացած հատվածում:

## Հոդված 7

### Ծրագրերի մշակումը և միջոցների հատկացումը

1. Մեկ կամ մի քանի երկրներ ներառող ծրագրերի համար 26(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան ընդունվում են ռազմավարության փաստաթղթեր: Ռազմավարության փաստաթղթերը պետք է արտացոլեն 3-րդ հոդվածում նշված քաղաքականության շրջանակը և գործողությունների ծրագրերը և համահունչ լինեն 4-րդ և 5-րդ հոդվածներում սահմանված սկզբունքների և ձևերի հետ: Ռազմավարության փաստաթղթերը մշակվում են քաղաքականության շրջանակում սահմանված գերակայությունների հետ համադրելի ժամանակահատվածի համար և նախատեսում են բազմամյա ինդիկատիվ ծրագրեր, որոնք ներառում են ինդիկատիվ բազմամյա ֆինանսական հատկացումներ և 2(2) հոդվածում թվարկված նպատակներին համահունչ գերակայություններ յուրաքանչյուր երկրի կամ տարածաշրջանի համար: Դրանք ենթակա են վերանայման՝ միջնաժամկետ կտրվածքով կամ ըստ անհրաժեշտության, և կարող են փոփոխվել 26(2) հոդվածով նախատեսված կարգով:

2. Մեկ կամ մի քանի երկրներ ներառող ծրագրեր սահմանելիս Հանձնաժողովը որոշում է յուրաքանչյուր ծրագրի համար նախատեսվող հատկացումները՝ կիրառելով թափանցիկ և անկողմնակալ չափորոշիչներ և հաշվի առնելով համապատասխան երկրի կամ տարածաշրջանի կոնկրետ առանձնահատկություններն ու կարիքները, տվյալ երկրի հետ Եվրոպական միության գործընկերության հավակնոտության աստիճանը, համաձայնեցված նպատակների իրագործմանն ուղղությամբ, ներառյալ կառավարման և բարեփոխումների մասով, գրանցված առաջընթացը, ինչպես նաև Համայնքի օժանդակության կառավարման և արդյունավետ օգտագործման կարողությունը:

3. Բացառապես միջսահմանային համագործակցության համար 9(1) հոդվածում նշված համատեղ գործառնական ծրագրերի ցանկը, ինդիկատիվ բազմամյա ծրագրերի շրջանակներում կատարվող հատկացումները և յուրաքանչյուր ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող տարածքային ստորաբաժանումները սահմանելու նպատակով ընդունվում են մեկ կամ անհրաժեշտության դեպքում մի քանի ռազմավարության փաստաթղթեր՝ 26(2) հոդվածում սահմանված ընթացակարգին համապատասխան: Ռազմավարության այդպիսի փաստաթղթերը մշակվում են 4-րդ

և 5-րդ հոդվածներում սահմանված սկզբունքների ու ձևերի հիման վրա և սկզբունքորեն ընդգրկում են 2007 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած յոթամյա ժամանակահատվածը:

4. Հանձնաժողովը սահմանում է միջսահմանային համագործակցության ծրագրերին ուղղված միջոցների հատկացումը՝ ելնելով այնպիսի օբյեկտիվ չափորոշիչներից, ինչպես օրինակ՝ ծրագրերում ներգրավման ենթակա տարածքների բնակչությունը և համագործակցության ակտիվության վրա ազդող այլ գործոնները, ներառյալ սահմանային տարածքների կոնկրետ առանձնահատկությունները և Համայնքի օժանդակության կառավարման ու արդյունավետ օգտագործման կարողությունը:

5. Տարածքային զարգացման եվրոպական հիմնադրամը (ՏԶԵՀ) աջակցում է սույն Կանոնակարգի դրույթների համաձայն մշակվող և իրականացվող միջսահմանային համագործակցության ծրագրերին: Տարածքային զարգացման եվրոպական հիմնադրամի կողմից տրամադրվող՝ գործընկեր երկրների սահմաններին ուղղված օժանդակության գումարը սահմանվում է Տարածքային զարգացման եվրոպական հիմնադրամի և Եվրոպական սոցիալական հիմնադրամի ու Համերաշխության հիմնադրամի մասին ընդհանուր դրույթներ սահմանող՝ Խորհրդի 2006 թվականի հուլիսի 11-ի թիվ 1083/2006 կանոնակարգով [9]:

6. Ճգնաժամերի կամ ժողովրդավարությանը, իրավունքի գերակայությանը, մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին սպառնացող վտանգների կամ բնական կամ մարդածին աղետների դեպքում կարող են կիրառվել արտակարգ իրավիճակներում ձեռնարկվող միջոցառումներ՝ ռազմավարության փաստաթղթերի ըստ պահանջի վերանայման նպատակով: Այդ վերանայումը պետք է ապահովի սույն Կանոնակարգի համաձայն տրամադրվող Համայնքի օժանդակության և Համայնքի այլ ֆինանսական գործիքների, ներառյալ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ Կայունության գործիք մշակելու վերաբերյալ կանոնակարգի (ԵՀ/Եվրատոմ) [10] համաձայն տրամադրվող օժանդակության միջև միասնականությունը:

### ԲԱԺԻՆ III

## ՄԻԶՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

### Հոդված 8

#### Աշխարհագրական համապատասխանելիությունը

1. 6(1)(ա)(ii) հոդվածում նշված միջսահմանային համագործակցության ծրագրերը կարող են ներառել ստորև նշված բոլոր սահմանակից տարածքները.

ա) Տարածքային միավորների վիճակագրական անվանացանկի (NUTS) 3-րդ մակարդակին համապատասխանող բոլոր տարածքային միավորները և դրանց համարժեքները՝ անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև ցամաքային սահմանների երկայնքով.

բ) Տարածքային միավորների վիճակագրական անվանացանկի 3–րդ մակարդակին համապատասխանող բոլոր տարածքային միավորները կամ դրանց համարժեքները՝ անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև ծովային տարածքներով:

գ) Տարածքային միավորների վիճակագրական անվանացանկի 2–րդ մակարդակին համապատասխանող բոլոր ավիամերձ տարածքային միավորները կամ դրանց համարժեքները, որոնք ունեն ելք դեպի անդամ պետությունների և գործընկեր երկրների համար ընդհանուր ծովային ավազան:

2. Գործող համագործակցության շարունակությունն ապահովելու համար և բոլոր այլ հիմնավորված դեպքերում առաջին պարբերությունում նշված տարածքներին հարող տարածքային միավորներին կարող է թույլ տրվել մասնակցել միջսահմանային համագործակցության ծրագրերին՝ 7(3) հոդվածում նշված ռազմավարության փաստաթղթերով սահմանված պայմանների ներքո:

3. Եթե ծրագրերը սահմանվում են (1)(բ) պարբերության համաձայն, Հանձնաժողովը կարող է գործընկերների հետ համաձայնության գալուց հետո առաջարկել, որպեսզի համագործակցությունում մասնակցությունը տարածվի Տարածքային միավորների վիճակագրական անվանացանկի 2–րդ մակարդակի ամբողջ տարածքային միավորի վրա, որի տարածքում գտնվում է Տարածքային միավորների վիճակագրական անվանացանկի 3–րդ մակարդակի տարածքային միավորը:

4. Զգալի կարևորություն ներկայացնող ծովային ուղիների ցանկը սահմանվում է Հանձնաժողովի կողմից 7(3) հոդվածում նշված ռազմավարության փաստաթղթերում՝ հեռավորության և այլ համապատասխան աշխարհագրական ու տնտեսական չափորոշիչների հիման վրա:

## Հոդված 9

### Ծրագրավորումը

1. Սույն Կանոնակարգի համաձայն միջսահմանային համագործակցությունն իրականացվում է բազմամյա ծրագրերի շրջանակում, որոնք նախատեսում են համագործակցություն մեկ կամ մի քանի սահմանների համար և բաղկացած են բազմամյա միջոցառումներից, որոնք ուղղված են մի շարք կոնկրետ գերակայությունների և կարող են իրագործվել Համայնքի օժանդակությամբ (այսուհետ՝ համատեղ գործառնական ծրագրեր): Համատեղ գործառնական ծրագրերը հիմնվում են 7(3) հոդվածում նշված ռազմավարության փաստաթղթերի վրա:

2. Ցամաքային սահմաններին և կարևոր նշանակության ծովային ուղիներին ուղղված համատեղ գործառնական ծրագրերը մշակվում են յուրաքանչյուր սահմանի համար համապատասխան տարածքային մակարդակով և ներառում են մեկ կամ մի քանի անդամ պետություններին և մեկ կամ մի քանի գործընկեր երկրներին պատկանող ծրագրերին մասնակցելու իրավունք ունեցող տարածքային միավորներ:

3. Ծովային ավազանների համար համատեղ գործառնական ծրագրերը բազմակողմ են և ներառում են ծրագրերին մասնակցելու իրավունք ունեցող տարածքային միավորները, որոնք ելք ունեն դեպի մի քանի մասնակից երկրներին պատկանող ընդհանուր ծովային ավազան, այդ թվում՝ առնվազն մեկ անդամ պետություն և մեկ գործընկեր երկիր՝ հաշվի առնելով ինստիտուցիոնալ համակարգերը և գործընկերության սկզբունքը: Դրանք կարող են ներառել մեկ անդամ պետության և մեկ գործընկեր երկրի միջև համագործակցությանն աջակցող երկկողմ աշխատանքներ: Այդ ծրագրերը մանրամասնորեն համաձայնեցվում են անդրազգային համագործակցության այն ծրագրերի հետ, որոնք ունեն մասամբ համընկնող աշխարհագրական ծածկույթ և Եվրոպական միությունում ստեղծվել են թիվ 1083/2006/ԵՀ կանոնակարգի համաձայն:

4. Համատեղ գործառնական ծրագրերը մշակվում են անդամ պետությունների և շահագրգիռ գործընկեր երկրների կողմից համապատասխան տարածքային մակարդակով՝ իրենց ինստիտուցիոնալ համակարգին համապատասխան և հաշվի առնելով 4-րդ հոդվածում նշված գործընկերության սկզբունքը: Դրանք սովորաբար ներառում են 2007 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած յոթամյա ժամանակահատվածը:

5. Համատեղ գործառնական ծրագրում կարող են այս կամ այն կերպ ներգրավվել մասնակից երկրներից բացի այլ երկրներ, որոնք ունեն ելք դեպի ընդհանուր ծովային ավազան, որտեղ գործողության մեջ է դրվում որևէ համատեղ գործառնական ծրագիր, և 11-րդ հոդվածում նշված կիրարկող կանոններով սահմանված պայմանների ներքո օգտվել Համայնքի օժանդակությունից:

6. 7(3) հոդվածում նշված ռազմավարության փաստաթղթերի հաստատումից հետո մեկ տարվա ընթացքում մասնակից երկրները Հանձնաժողովին համատեղ ներկայացնում են համատեղ գործառնական ծրագրերի առաջարկներ: Յուրաքանչյուր համատեղ գործառնական ծրագիր Հանձնաժողովի կողմից ընդունում է սույն Կանոնակարգի և կիրարկող կանոնների հետ դրա համապատասխանությունը գնահատելուց հետո:

7. Համատեղ գործառնական ծրագրերը կարող են վերափոխվել մասնակից երկրների, մասնակից սահմանային տարածքների կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հաշվի առնելու համագործակցության գերակայությունների փոփոխությունները, սոցիալ-տնտեսական զարգացումները, համապատասխան միջոցառումների իրականացման և դիտանցման ու գնահատման արդյունքները և օժանդակության առկա գումարների ճշգրտման և ռեսուրսների վերաբաշխման անհրաժեշտությունը:

8. Համատեղ գործառնական ծրագրերն ընդունելուց հետո Հանձնաժողովը գործընկեր երկրների հետ կնքում է ֆինանսավորման համաձայնագիր՝ «Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող Ֆինանսական կանոնակարգի մասին» [11] Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի թիվ 1605/2002 կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն: Ֆինանսավորման համաձայնագիրը ներառում է համատեղ գործառնական ծրագրի իրականացման

համար անհրաժեշտ իրավական դրույթները և պետք է նաև ստորագրվի 10-րդ հոդվածում նշված համատեղ ղեկավարման մարմնի կողմից:

9. Մասնակից երկրները, հաշվի առնելով գործընկերության սկզբունքը, համատեղ ընտրում են համատեղ գործառնական ծրագրի գերակայությունների և միջոցառումների հետ համահունչ այն գործողությունները, որոնց ուղղվում է Համայնքի օժանդակությունը:

10. Կոնկրետ և պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում, եթե.

ա) համատեղ գործառնական ծրագիրը չի կարող սահմանվել մասնակից երկրների կամ Եվրոպական միության և գործընկեր երկրի հարաբերություններում ծագող հիմնախնդիրների պատճառով.

բ) ամենաուշը մինչև 2010 թվականի հունիսի 10-ը մասնակից երկրները Հանձնաժողովին դեռևս չեն ներկայացրել համատեղ գործառնական ծրագիր.

գ) գործընկեր երկիրը չի ստորագրում ֆինանսավորման համաձայնագիրը մինչև ծրագրի ընդունմանը հաջորդող տարվա վերջը.

դ) համատեղ գործառնական ծրագիրը չի կարող իրականացվել մասնակից երկրների հարաբերություններում ծագող հիմնախնդիրների պատճառով:

Հանձնաժողովը շահագրգիռ անդամ պետության (պետությունների) հետ խորհրդակցություններից հետո ձեռնարկում է անհրաժեշտ քայլերը՝ հնարավորություն տալու շահագրգիռ անդամ պետությանն օգտվել Տարածքային զարգացման եվրոպական հիմնադրամի՝ ծրագրին ուղղված օժանդակությունից՝ թիվ 1083/2006 Կանոնակարգի համաձայն:

Հոդված 10

Ծրագրերի կառավարումը

1. Համատեղ գործառնական ծրագրերը սկզբունքորեն իրականացվում են անդամ պետությունում գտնվող համատեղ ղեկավարման մարմնի կողմից ընդհանուր կառավարման միջոցով: Համատեղ ղեկավարման մարմնին կարող է աջակցել տեխնիկական հարցերով համատեղ քարտուղարությունը:

2. Մասնակից երկրները կարող են առաջարկել Հանձնաժողովին, որպեսզի համատեղ ղեկավարման մարմինը տեղակայվի գործընկեր երկրում՝ պայմանով, որ նշանակված մարմինն ի վիճակի է ամբողջությամբ կիրառել թիվ 1605/2002 կանոնակարգի (ԵՀ/Եվրատոմ) համապատասխան դրույթներով սահմանված չափորոշիչները:

3. Սույն կանոնակարգի նպատակներից ելնելով «համատեղ ղեկավարման մարմին» նշանակում է պետական կամ մասնավոր մարմին, այդ թվում՝ տվյալ պետությունը՝ ազգային, տարածքային կամ տեղական մակարդակով, որոնք համատեղ նշանակվում

են համատեղ գործառնական ծրագրում ընդգրկված անդամ պետության կամ պետությունների և գործընկեր երկրի կամ երկրների կողմից, որոնք ունեն Համայնքի օժանդակությունը տնօրինելու համար անհրաժեշտ ֆինանսական և վարչական կարողություններ, ինչպես նաև իրավունակություն սույն Կանոնակարգի նպատակներից բխող անհրաժեշտ համաձայնագրեր կնքելու համար:

4. Համատեղ ղեկավարման մարմինը պատասխանատու է համատեղ գործառնական ծրագիրը արդյունավետ տեխնիկական և ֆինանսական կառավարման սկզբունքին համապատասխան կառավարելու և իրականացնելու համար, ինչպես նաև պատասխանատու է իր աշխատանքների օրինականությունն ու կանոնավոր բնույթն ապահովելու համար: Այդ իսկ նպատակով այն սահմանում է կառավարման, հսկողության և հաշվապահական հաշվառման համապատասխան համակարգեր ու չափանիշներ:

5. Համատեղ գործառնական ծրագրի կառավարման և հսկողության համակարգը նախատեսում է կառավարման, հավաստագրման և աուդիտորական գործառույթների պատշաճ տարանջատում՝ կառավարման մարմնում պարտականությունների պատշաճ տարանջատման կամ հավաստագրման և աուդիտի համար առանձին մարմինների նշանակման միջոցով:

6. Համատեղ գործառնական ծրագրերի իրագործմանը պատշաճ կերպով պատրաստվելու համար, համատեղ գործառնական ծրագրի ընդունումից հետո և ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրելուց առաջ, Հանձնաժողովը կարող է թույլ տալ համատեղ ղեկավարման մարմնին օգտագործել ծրագրի բյուջեի մի մասը՝ սկսելու ծրագրի հետ կապված մի շարք աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես օրինակ՝ կառավարման մարմնի, տեխնիկական օժանդակության և այլ նախապատրաստական գործողությունների համար նախատեսված գործառնական ծախսերը: Նման նախապատրաստական փուլի մանրամասները ներառված են 11-րդ հոդվածով նախատեսված կիրարկման կանոններում:

## Հոդված 11

### Կիրարկող կանոնները

1. Սույն բաժնի իրականացման համար հատուկ դրույթներ սահմանող կիրարկող կանոններն ընդունվում են 26(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

2. Կիրարկող կանոնները ներառում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ համաֆինանսավորման գործակիցը, համատեղ գործառնական ծրագրերի նախապատրաստումը, համատեղ մարմինների նշանակումը և գործառույթները, դիտանցման և ընտրական կոմիտեների և համատեղ քարտուղարության դերը և գործառույթը, թույլատրելի ծախսերը, համատեղ ծրագրերի ընտրությունը, նախապատրաստական փուլը, Համայնքի օժանդակության տեխնիկական և ֆինանսական կառավարումը, ֆինանսական հսկողությունը և աուդիտը,

դիտանցումը և գնահատումը, տեսանելիությունը և պոտենցիալ շահառուների իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

#### ԲԱԺԻՆ IV

#### ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

#### Հոդված 12

Գործողությունների ծրագրերի ընդունումը

1. 7(1) հոդվածում նշված ռազմավարության փաստաթղթերի հիման վրա կազմված գործողությունների ծրագրերն ընդունվում են 26(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ սովորաբար տարեկան կտրվածքով:

Բացառիկ դեպքերում, օրինակ՝ եթե գործողությունների ծրագիրը դեռ չի ընդունվել, Հանձնաժողովը կարող է 7-րդ հոդվածում նշված ռազմավարության փաստաթղթերի և բազմամյա ինդիկատիվ ծրագրերի հիման վրա ընդունել գործողությունների ծրագրով չնախատեսված միջոցներ՝ գործողությունների ծրագրերի նկատմամբ կիրառվող կանոնների և ընթացակարգերի համաձայն:

2. Գործողությունների ծրագրերում մանրամասն ներկայացվում են նպատակները, միջամտության ոլորտները, ակնկալվող արդյունքները, կառավարման ընթացակարգերը և պլանավորվող ֆինանսավորման ընդհանուր գումարը: Այդ ծրագրերում հաշվի են առնվում նախկինում Համայնքի օժանդակության իրականացման արդյունքում քաղած դասերը: Դրանք ընդգրկում են ֆինանսավորվող գործողությունների նկարագրությունը, յուրաքանչյուր գործողության համար հատկացվող գումարների մասին նշում և իրականացման ինդիկատիվ ժամանակացույց: Դրանք սահմանում են կատարողական ցուցանիշները, որոնք պետք է դիտանցվեն ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող միջոցառումների իրականացման ընթացքում:

3. Միջսահմանային համագործակցության նպատակով Հանձնաժողովը 9-րդ հոդվածում նշված ընթացակարգերին համապատասխան ընդունում է համատեղ ծրագրեր:

4. Հանձնաժողովը գործողությունների ծրագրերն ու միջսահմանային համագործակցության համատեղ ծրագրերն ընդունելուց հետո մեկամյա ժամանակահատվածում դրանք ներկայացնում է Եվրոպական պառլամենտին և անդամ պետություններին՝ ի գիտություն:

#### Հոդված 13

Ռազմավարության փաստաթղթերով կամ բազմամյա ինդիկատիվ ծրագրերով չնախատեսված հատուկ միջոցների ընդունումը

1. Չնախատեսված և պատշաճ կերպով հիմնավորված կարիքների կամ հանգամանքների դեպքում Հանձնաժողովն ընդունում է ռազմավարության փաստաթղթերում կամ բազմամյա ինդիկատիվ ծրագրերով չսահմանված հատուկ միջոցներ (այսուհետ՝ հատուկ միջոցներ):

Հատուկ միջոցների շրջանակներում կարող են ֆինանսավորվել նաև այնպիսի աշխատանքներ, որոնք դյուրացնում են արտակարգ իրավիճակներում տրամադրվող օգնության վերափոխումը երկարաժամկետ զարգացման աշխատանքների, ներառյալ այնպիսի աշխատանքներ, որոնք կոչված են հանրությանը կրկնվող ճգնաժամերին առավել լավ նախապատրաստելուն:

2. Եթե նման միջոցների ծախսերը գերազանցում են 10 000 000 եվրոն, Հանձնաժողովը դրանք ընդունում է 26(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

26(2) հոդվածում նշված ընթացակարգը կիրառելու անհրաժեշտություն չկա, եթե հատուկ միջոցներում կատարվում են այնպիսի փոփոխություններ, ինչպես օրինակ տեխնիկական համապատասխանեցումներ, իրականացման ժամկետի երկարաձգում, կանխատեսված բյուջեում հատկացումների վերաբաշխում կամ ոչ ավելի քան սկզբնական բյուջեի 20 %-ի չափով բյուջեի միջոցների ավելացում՝ պայմանով, որ այդ փոփոխություններն ազդեցություն չունենան Հանձնաժողովի որոշման մեջ սահմանված սկզբնական նպատակների վրա:

3. Հատուկ միջոցներով սահմանվում են նպատակները, գործունեության ոլորտները, ակնկալվող արդյունքները, կառավարման ընթացակարգերն ու պլանավորված ֆինանսավորման ընդհանուր գումարը: Դրանք պարունակում են ֆինանսավորվող գործողությունների նկարագրությունը, յուրաքանչյուր գործողության համար հատկացվող գումարների մասին նշում և իրականացման ինդիկատիվ ժամանակացույցը: Դրանք սահմանում են կատարողական ցուցանիշները, որոնք պետք է դիտանցվեն ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող միջոցառումների իրականացման ընթացքում:

4. Հանձնաժողովն իր որոշումն ընդունելուց հետո մեկամսյա ժամանակահատվածում 10 000 000 եվրոն չգերազանցող արժեքի հատուկ միջոցները ներկայացնում է Եվրոպական պառլամենտին և անդամ պետություններին՝ ի գիտություն:

Հոդված 14

Մասնակցության իրավունքը

1. Ստորև նշվածները կարող են ֆինանսավորվել սույն Կանոնակարգի ներքո՝ գործողությունների ծրագրերի, միջսահմանային համագործակցության համատեղ ծրագրերի և հատուկ միջոցների իրականացման նպատակներով.

ա) գործընկեր երկրները և տարածքները և դրանց կառույցները,

բ) գործընկեր երկրներում ապակենտրոնացված միավորները, ինչպես օրինակ՝ շրջաններ, դեպարտամենտներ, պրովինցիաներ և համայնքներ,

գ) գործընկեր երկրների և տարածքների ու Համայնքի կողմից հիմնադրված համատեղ մարմիններ,

դ) միջազգային կազմակերպություններ, ներառյալ տարածաշրջանային կազմակերպություններ, ՄԱԿ-ի մարմիններ, դեպարտամենտներ և առաքելություններ, միջազգային ֆինանսական կազմակերպություններ և զարգացման բանկեր՝ այնքանով, որքանով դրանք նպաստում են սույն Կանոնակարգի նպատակների իրագործմանը,

ե) Համայնքի հաստատությունները և մարմինները, սակայն միայն 16-րդ հոդվածով սահմանված տեսակի օժանդակության միջոցառումների իրականացման նպատակներով,

զ) Եվրոպական միության գործակալությունները,

է) անդամ պետությունների, գործընկեր երկրների և տարածքների հետևյալ սուբյեկտներն ու մարմինները և այլ երրորդ երկրներ, որոնք համապատասխանում են 21-րդ հոդվածում նշված՝ Համայնքի արտաքին օժանդակությունից օգտվելու մասին կանոններին՝ այնքանով, որքանով դրանք նպաստում են սույն Կանոնակարգի նպատակների իրագործմանը.

ի) պետական կամ պետական մասնակցությամբ մարմիններ, տեղական ինքնակառավարման կամ տարածքային կառավարման մարմիններ ու դրանց միություններ,

ii) ընկերություններ, ֆիրմաներ և այլ մասնավոր կազմակերպություններ ու ձեռնարկություններ,

iii) ֆինանսական կազմակերպություններ, որոնք տրամադրում, խթանում և ֆինանսավորում են մասնավոր ներդրումները գործընկեր երկրներում և տարածքներում,

iv) «ը» կետով սահմանված ոչ պետական սուբյեկտներ,

v) ֆիզիկական անձինք,

ը) հետևյալ ոչ պետական սուբյեկտները.

i) ոչ կառավարական կազմակերպություններ,

ii) ազգային և (կամ) էթնիկ փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններ,

- iii) տեղական բնակիչների խմբեր և առևտրականների միություններ,
- iv) կոոպերատիվներ, արհեստակցական միություններ, տնտեսական և սոցիալական շահեր ներկայացնող կազմակերպություններ,
- v) ապակենտրոնացված տարածքային համագործակցության և ինտեգրման մեջ ներգրավված տեղական կազմակերպություններ (ներառյալ ցանցեր),
- vi) սպառողների կազմակերպություններ, կանանց և երիտասարդական կազմակերպություններ, ուսումնական, մշակութային գիտահետազոտական կազմակերպություններ,
- vii) համալսարաններ,
- viii) եկեղեցիներ և կրոնական միություններ և համայնքներ,
- ix) լրատվամիջոցներ,
- x) միջսահմանային միություններ, ոչ պետական միություններ և անկախ հիմնադրամներ:

2. Սույն Կանոնակարգով նախատեսված նպատակների իրագործման հարցում առանցքային նշանակություն ունենալու դեպքում Համայնքի օժանդակությունը կարող է շնորհվել սույն հոդվածում չնշված մարմինների կամ սուբյեկտների:

## Հոդված 15

### Միջոցների տեսակները

1. Համայնքի օժանդակությունը կիրառվում է ծրագրերի, նախագծերի և սույն Կանոնակարգով նախատեսված նպատակների իրագործմանը նպաստող ցանկացած միջոցառում ֆինանսավորելու համար:
2. Համայնքի օժանդակությունը նաև կարող է կիրառվել՝
  - ա) ֆինանսավորելու տեխնիկական օժանդակությունը և նպատակային վարչական միջոցները, ներառյալ այն համագործակցության միջոցները, որոնցում ներգրավված են անդամ պետություններից գործուղվող հանրային ոլորտի մասնագետներ, ինչպես նաև ծրագրում ներգրավված իրենց տարածաշրջանային և տեղական մարմինները.
  - բ) ֆինանսավորելու ներդրումները և ներդրումներին առնչվող աշխատանքները.
  - գ) օժանդակելու ԵՆԲ–ին կամ այլ ֆինանսական միջնորդներին, 23-րդ հոդվածի համաձայն, վարկերի ֆինանսավորման, կապիտալ ներդրումների, երաշխիքային հիմնադրամների կամ ներդրումային հիմնադրամների համար.

դ) բացառիկ դեպքերում՝ պարտքերից ազատման ծրագրերի համար՝ պարտքերից ազատման միջազգայնորեն համաձայնեցված ծրագրի շրջանակներում:

ե) հատվածային կամ ընդհանուր բյուջետային օժանդակության համար, եթե գործընկեր երկրի կողմից պետական ծախսերի կառավարումը բավականաչափ թափանցիկ, հուսալի և արդյունավետ է, և եթե այն գործողության մեջ է դրել իր հիմնական դոնորների, այդ թվում՝ համապատասխան դեպքերում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հաստատված՝ պատշաճ կերպով ձևակերպված հատվածային կամ մակրոտնտեսական քաղաքականություն:

զ) տրամադրելու տոկոսադրույքի սուբսիդիաներ, մասնավորապես շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված վարկերի համար:

է) ապահովագրելու ոչ առևտրային ռիսկեր:

ը) տրամադրելու օժանդակություն Համայնքի, իր անդամ պետությունների, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, այլ դոնորների կամ գործընկեր երկրների կողմից ստեղծված որևէ հիմնադրամի:

թ) կատարելու ներդրումներ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կամ տարածաշրջանային զարգացման բանկերի կապիտալում:

ժ) ֆինանսավորելու Համայնքի օժանդակությունից օգտվող երկրների կողմից ծրագրերի և նախագծերի արդյունավետ կառավարման և վերահսկման համար անհրաժեշտ ծախսեր:

ժա) ֆինանսավորելու փոքրածավալ նախագծեր:

ժբ) պարենային անվտանգությանն ուղղված միջոցների համար:

3. Համայնքի օժանդակությունն սկզբունքորեն չի կիրառվում հարկերի, մաքսատուրքերի և հարկաբյուջետային այլ գանձումների ֆինանսավորման համար:

Հոդված 16

Օժանդակ միջոցները

1. Համայնքի կողմից ֆինանսավորումը կարող է նաև ծածկել նախապատրաստական, վերահսկողության, դիտանցման, աուդիտի և գնահատման աշխատանքների հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն անհրաժեշտ են սույն Կանոնակարգի իրականացման և դրանով նախատեսված այնպիսի նպատակների իրագործման համար, ինչպես օրինակ՝ ուսումնասիրություններ, հանդիպումներ, տեղեկատվություն, իրազեկության բարձրացում, հրատարակչական և վերապատրաստման աշխատանքներ, ներառյալ գործընկերների համար վերապատրաստման և կրթական միջոցառումներ, որոնք հնարավոր են դարձնում ծրագրի տարբեր փուլերում նրանց մասնակցությունը, տեղեկությունների

փոխանակման համար համակարգչային ցանցերի հետ կապված ծախսեր և ցանկացած այլ վարչական կամ տեխնիկական օժանդակության ծախս, որը Հանձնաժողովը կարող է կրել ծրագրի կառավարման համար: Այն նաև ծածկում է Հանձնաժողովի պատվիրակություններում կատարվող ծախսերը՝ սույն Կանոնակարգի համաձայն ֆինանսավորվող գործողությունները կառավարելու համար անհրաժեշտ վարչական օժանդակության մասով:

2. Պարտադիր չէ, որ այդ օժանդակ միջոցները ծածկվեն բազմամյա ծրագրերով, այդ իսկ պատճառով դրանք կարող են ֆինանսավորվել ռազմավարության փաստաթղթերի և բազմամյա ինդիկատիվ ծրագրերի շրջանակներից դուրս: Այնուամենայնիվ, դրանք կարող են նաև ֆինանսավորվել բազմամյա ինդիկատիվ ծրագրերի շրջանակներում: Հանձնաժողովը 13-րդ հոդվածի համաձայն ընդունում է բազմամյա ինդիկատիվ ծրագրերով չնախատեսված օժանդակ միջոցներ:

Հոդված 17

Համաֆինանսավորումը

1. Սույն Կանոնակարգի համաձայն ֆինանսավորվող միջոցները կարող են, մասնավորապես, համաֆինանսավորվել հետևյալ աղբյուրներից.

ա) անդամ պետություններ, նրանց տարածքային և տեղական իշխանություններ, ինչպես նաև նրանց պետական գործակալություններն ու պետական մասնակցությամբ գործակալությունները,

բ) Եվրոպական տնտեսական տարածքի երկրներ, Շվեյցարիա և այլ դոնոր երկրներ և, մասնավորապես, նրանց պետական գործակալություններն ու պետական մասնակցությամբ գործակալությունները,

գ) միջազգային կազմակերպություններ, ներառյալ տարածաշրջանային կազմակերպություններ և, մասնավորապես, միջազգային և տարածաշրջանային ֆինանսական հաստատություններ,

դ) ընկերություններ, ֆիրմաներ, այլ մասնավոր կազմակերպություններ և ձեռնարկություններ, ինչպես նաև ոչ պետական սուբյեկտներ,

ե) ֆինանսավորվող գործընկեր երկրներ և տարածքներ:

2. Զուգահեռ համաֆինանսավորման դեպքում ծրագիրը կամ նախագիծը կազմվում է մի շարք հստակ սահմանված առանձին ենթանախագծերից, որոնցից յուրաքանչյուրը ֆինանսավորվում է համաֆինանսավորում տրամադրող տարբեր գործընկերների կողմից՝ այնպիսի եղանակով, որ ցանկացած պահի հնարավոր լինի որոշել ֆինանսավորման վերջնական օգտագործումը: Համատեղ համաֆինանսավորման դեպքում նախագծի կամ ծրագրի ընդհանուր ծախսը բաշխվում է համաֆինանսավորող գործընկերների միջև, և ռեսուրսները կուտակվում են այնպիսի

եղանակով, որ հնարավոր չէ որոշել նախագծի կամ ծրագրի շրջանակներում նախաձեռնվող որևէ կոնկրետ գործողության ֆինանսավորման աղբյուրը:

3. Համատեղ համաֆինանսավորման դեպքում Հանձնաժողովը կարող է ստանալ և կառավարել միջոցներ 1(ա), (բ) և (գ) պարբերությունում նշված մարմինների անունից՝ համատեղ միջոցառումներ իրականացնելու նպատակով: Նման միջոցները համարվում են հատկացված շահույթ՝ թիվ 1605/2002 կանոնակարգի 18-րդ հոդվածին համապատասխան:

#### Հոդված 18

##### Կառավարման ընթացակարգերը

1. Հանձնաժողովն սույն Կանոնակարգով նախատեսված գործողություններն իրականացնում է թիվ 1605/2002 կանոնակարգի (ԵՀ/Եվրատոմ) համաձայն:

2. Հանձնաժողովը կարող է թիվ 1605/2002 կանոնակարգի (ԵՀ/Եվրատոմ) 54(2) հոդվածով նշված մարմիններին հանձնարարել պետական մարմնի և մասնավորապես բյուջեի կատարման մասով առաջադրանքներ, եթե դրանք միջազգային ճանաչում են վայելում, համապատասխանում են միջազգայնորեն ճանաչված կառավարման և հսկողության համակարգերին և վերահսկվում են պետական մարմնի կողմից:

3. Հանձնաժողովը կարող է շրջանակային համաձայնագրեր կնքել գործընկեր կրկրների հետ, որոնք նախատեսում են Համայնքի օժանդակությունն արդյունավետ կերպով իրականացնելու և Համայնքի ֆինանսական շահերի պաշտպանությունը երաշխավորելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները:

4. Ապակենտրոնացված կառավարման դեպքում Համայնքը կարող է որոշել օգտագործել շահառու գործընկեր երկրի կամ տարածաշրջանի՝ գնումների կամ դրամաշնորհների վերաբերյալ ընթացակարգերը՝ պայմանով, որ՝

ա) շահառու գործընկեր երկրի կամ տարածաշրջանի ընթացակարգերը բավարարում են թափանցիկության, համաչափության, հավասար մոտեցման և խտրականության բացառման սկզբունքները և կանխում են շահերի ցանկացած բախում.

բ) շահառու գործընկեր երկիրը կամ տարածաշրջանը պարտավորվում է պարբերաբար ստուգել Համայնքի բյուջեի հաշվին ֆինանսավորվող գործողությունների պատշաճ կատարումը, ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ կանխելու խախտումներն ու խարդախությունը, ինչպես նաև օգտվել, անհրաժեշտության դեպքում, իրավական պաշտպանության միջոցներից՝ ոչ պատշաճ կերպով վճարված միջոցների դիմաց հատուցում ստանալու համար:

#### Հոդված 19

##### Բյուջետային պարտավորությունները

1. Բյուջետային պարտավորությունները սահմանվում են 9(6), 12(1), 13(1) և 16(2) հոդվածների համաձայն Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների հիման վրա:

2. Մի քանի ֆինանսական տարի տևող միջոցառումների համար բյուջետային պարտավորությունները կարող են կատարվել մի քանի տարվա ընթացքում մասնակի մարումների տեսքով:

3. Համայնքի ֆինանսավորումը կարող է, մասնավորապես, կատարվել հետևյալ իրավական ձևերից մեկով. ֆինանսավորման համաձայնագրեր, դրամաշնորհային պայմանագրեր, գնման պայմանագրեր, աշխատանքային պայմանագրեր:

Հոդված 20

Համայնքի ֆինանսական շահերը պաշտպանելը

1. Սույն Կանոնակարգից բխող ցանկացած համաձայնագրով նախատեսվում են Համայնքի ֆինանսական շահերի պաշտպանությունն ապահովող դրույթներ, մասնավորապես՝ կապված խախտումների, խարդախության, կոռուպցիայի և ցանկացած այլ անօրինական գործունեության հետ՝ «Եվրոպական համայնքների ֆինանսական շահերի պաշտպանության մասին» Խորհրդի 1995 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 2988/95 կանոնակարգի (ԵՀ/Եվրատոմ) [12], ինչպես նաև «Եվրոպական համայնքների ֆինանսական շահերը խարդախությունից և այլ խախտումներից պաշտպանելու նպատակով Հանձնաժողովի կողմից տեղում իրականացվող ստուգումների և տեսչական ստուգումների մասին» Խորհրդի 1996 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 2185/96 կանոնակարգի (ԵՀ/Եվրատոմ) [13] և «Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի կողմից իրականացվող քննությունների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի մայիսի 25-ի թիվ 1073/1999 կանոնակարգի (ԵՀ) [14] համաձայն:

2. Համաձայնագրերով Հանձնաժողովն ու Աուդիտորների դատարանն ուղղակիորեն իրավունք ունեն անցկացնելու աուդիտ, ներառյալ՝ փաստաթղթային աուդիտ կամ Համայնքի օժանդակությունից օգտվող ցանկացած կատարողի կամ նրա կոնտրազենտի մոտ տեղում անցկացվող աուդիտ: Դրանք նաև ուղղակիորեն լիազորում են Հանձնաժողովին իրականացնելու տեղում անցկացվող ստուգումներ և տեսչական ստուգումներ՝ թիվ 2185/96 կանոնակարգով (ԵՀ/Եվրատոմ) նախատեսված կարգով:

3. Համայնքի օժանդակության իրականացումից բխող բոլոր պայմանագրերով ապահովվում են Հանձնաժողովի և Աուդիտորների դատարանի՝ 2-րդ պարբերությամբ սահմանված իրավունքները՝ պայմանագրերի կատարման ընթացքում և դրանից հետո:

Հոդված 21

## Մրցույթներում և պայմանագրերում մասնակցությունը

1. Սույն Կանոնակարգի համաձայն ֆինանսավորվող գնման պայմանագրերի կամ դրամաշնորհային պայմանագրերի կնքմանը կարող են մասնակցել Համայնքի անդամ պետության, սույն Կանոնակարգի համաձայն օժանդակություն ստացող երկրի կամ «Նախանդամակցային օժանդակության գործիքի հիմնադրման մասին» Խորհրդի 2006 թվականի հուլիսի 17-ի թիվ 1085/2006/ԵՀ կանոնակարգով [15] նախատեսված՝ Նախանդամակցային օժանդակության գործիքի շրջանակներում օժանդակություն ստացող երկրի կամ Եվրոպական տնտեսական տարածաշրջանի անդամ պետության քաղաքացիություն ունեցող բոլոր ֆիզիկական անձինք և այնտեղ հիմնադրված բոլոր իրավաբանական անձինք:

2. Հանձնաժողովը կարող է պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում թույլ տալ հարևան երկրների հետ ավանդական տնտեսական, առևտրային կամ աշխարհագրական կապեր ունեցող երկրի քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձանց կամ այնտեղ հիմնադրված իրավաբանական անձանց մասնակցությունը, ինչպես նաև տարբեր երկրների ծագում ունեցող պարագաների և նյութերի օգտագործումը:

3. Սույն Կանոնակարգի շրջանակներում ֆինանսավորվող գնման պայմանագրերի կամ դրամաշնորհային պայմանագրերի կնքմանը կարող են մասնակցել նաև 1-ին պարբերությունում նշված երկրներից բացի ցանկացած այլ երկրում հիմնադրված իրավաբանական անձինք և այդ երկրի քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձինք, եթե առկա է արտաքին օժանդակությունից փոխադարձ օգտվելու հնարավորություն: Արտաքին օժանդակությունից փոխադարձ օգտվելու հնարավորությունն ընձեռվում է, եթե երկիրն անդամ պետություններին և համապատասխան շահառու երկրին տալիս է հավասար պայմաններով օժանդակությանը մասնակցելու իրավունք:

Համայնքի արտաքին օժանդակությունից փոխադարձ օգտվելու հնարավորությունն ընձեռվում է տվյալ երկրի կամ երկրների տվյալ տարածաշրջանային խմբի վերաբերյալ կոնկրետ որոշմամբ: Նշված որոշումն ընդունվում է Հանձնաժողովի կողմից՝ 26(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն, և ուժի մեջ է առնվազն մեկ տարի ժամկետով:

Համայնքի արտաքին օժանդակությունից փոխադարձ օգտվելու հնարավորության տրամադրման համար հիմք է հանդիսանում Համայնքի և այլ դոնորների միջև համեմատությունը և ընթանում է հատվածային կամ ամբողջ երկրի մակարդակով՝ լինի դա դոնոր, թե շահառու երկիր: Դոնոր երկրին նման փոխադարձություն շնորհելու մասին որոշման հիմքում ընկած է այդ դոնորի կողմից տրամադրվող օգնության թափանցիկությունը, հետևողականությունը և համաչափությունը, ներառյալ դրա որակական և քանակական բնույթը: Սույն պարբերությունում նկարագրված գործընթացի ժամանակ անհրաժեշտ է խորհրդակցություններ անցկացնել շահառու երկրների հետ:

4. Սույն Կանոնակարգի համաձայն ֆինանսավորվող գնման կամ դրամաշնորհային պայմանագրերի կնքմանը կարող են մասնակցել միջազգային կազմակերպությունները:

5. Պայմանագրերի կնքման ընթացակարգերի համատեքստում առաջարկվող փորձագետները չպետք է պարտադիր կերպով համապատասխանեն քաղաքացիության վերաբերյալ վերը սահմանված կանոններին:

6. Սույն Կանոնակարգի շրջանակներում ֆինանսավորվող պայմանագրերի համաձայն ձեռք բերված բոլոր պարագաների և նյութերի ծագման վայրը պետք է լինի Համայնքը կամ սույն հոդվածի պահանջներին համապատասխանող այլ երկիր: Սույն Կանոնակարգի նպատակներից էլնելով «ծագում» հասկացությունը սահմանվում է մաքսային նպատակներով ապրանքի ծագման կանոնների մասին Համայնքի համապատասխան օրենսդրությամբ:

7. Հանձնաժողովը կարող է պատշաճ կերպով հիմնավորված բացառիկ դեպքերում թույլ տալ 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված երկրներից բացի այլ երկրներում հիմնադրված իրավաբանական անձանց կամ այդ երկրների քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձանց մասնակցությունը, ինչպես նաև 6-րդ պարբերությունում սահմանվածից բացի այլ երկրի ծագում ունեցող պարագաների և նյութերի ձեռքբերումը: Շեղումները կարող են արդարացվել տվյալ երկրների շուկաներում ապրանքների և ծառայությունների բացակայությամբ, ծայրահեղ անհրաժեշտությամբ կամ եթե մասնակցության իրավունքի վերաբերյալ կանոններն անհնար կամ չափազանց դժվար են դարձնում ծրագրի, նախագծի կամ գործողության իրականացումը:

8. Եթե Համայնքի ֆինանսավորմամբ նախատեսվում է միջազգային կազմակերպության միջոցով իրականացվող գործողություն, համապատասխան պայմանագրային ընթացակարգերին կարող են մասնակցել բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ում 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն վերապահված է մասնակցության իրավունք, ինչպես նաև այդ կազմակերպության կանոններին համապատասխան մասնակցելու իրավունք ունեցող բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բոլոր դոնորների նկատմամբ հավասար վերաբերմունք ապահովելու ուղղությամբ: Մինևսույն կանոնները կիրառվում են պարագաների, նյութերի և փորձագետների նկատմամբ:

Եթե Համայնքի ֆինանսավորմամբ նախատեսվում է անդամ պետության, 3-րդ պարբերությունում սահմանված փոխադարձության սկզբունքի պահպանմամբ երրորդ երկրի, ինչպես նաև տարածաշրջանային կազմակերպության հետ համաֆինանսավորվող գործողություն, համապատասխան պայմանագրային ընթացակարգերին կարող են մասնակցել 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն մասնակցության իրավունք ունեցող բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ինչպես նաև այդ անդամ պետության, երրորդ երկրի կամ տարածաշրջանային կազմակերպության կանոնների համաձայն մասնակցության

իրավունք ունեցող բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: Միննույն կանոնները կիրառվում են պարագաների, նյութերի և փորձագետների նկատմամբ:

9. Եթե սույն Կանոնակարգի համաձայն տրամադրվող Համայնքի օժանդակությունը կառավարվում է համատեղ ղեկավարման մարմնի կողմից, ինչպես նշված է 10-րդ հոդվածում, գնումների կանոնները 11-րդ հոդվածով սահմանված կիրարկող կանոններում սահմանված կանոններն են:

10. Մրցույթի մասնակիցները, որոնց հետ սույն Կանոնակարգի համաձայն պայմանագրեր են կնքվել, պարտավոր են հետևել աշխատանքի հիմնական ստանդարտներին, որոնք սահմանված են Աշխատանքի համաշխարհային կազմակերպության համապատասխան կոնվենցիաներում:

11. Գործողության նպատակների առումով՝ 1-10-րդ պարբերություններով չի սահմանափակվում՝ ըստ գործունեության բնույթի կամ տեղակայման, մասնակցության իրավունք ունեցող կատեգորիաներին դասվող կազմակերպությունների մասնակցությունը:

Հոդված 22

Նախաֆինանսավորումը

Շահառուներին կատարվող նախաֆինանսավորման վճարումներից ստացվող տոկոսագումարը հանվում է վերջնական վճարումից:

## Հողված 23

ԵՆԲ–ին կամ ֆինանսական այլ միջնորդներին տրամադրվող միջոցները

1. 15(2)(գ) հոդվածում նշված միջոցները կառավարվում են ֆինանսական միջնորդների, ԵՆԲ–ի կամ դրանք կառավարելու կարողությամբ ցանկացած այլ բանկի կամ կազմակերպության կողմից:

2. Հանձնաժողովը յուրաքանչյուր դեպքի համար սահմանում է 1-ին պարբերությունը կիրարկող դրույթներ՝ կանոնակարգելու ռիսկերի բաշխումը, իրականացման համար պատասխանատու միջնորդի վարձատրությունը, միջոցներից ստացվելիք շահույթի օգտագործումը և վերադարձը և գործունեության դադարեցումը:

## Հողված 24

Գնահատումը

1. Հանձնաժողովը պարբերաբար գնահատում է աշխարհագրական և միջսահմանային քաղաքականության և ծրագրերի ու հատվածային քաղաքականության արդյունքները, ինչպես նաև ծրագրերի մշակման գործընթացի արդյունավետությունը՝ համոզվելու, որ նպատակներն իրագործվել են և հնարավորություն ընձեռելու մշակել առաջարկություններ՝ հետագա գործողությունները կատարելագործելու նպատակով:

2. Հանձնաժողովը 26-րդ հոդվածում նշված կոմիտեի քննարկմանն է ներկայացնում կարևոր նշանակություն ունեցող գնահատման զեկույցներ: Այս հաշվետվությունները և քննարկումները հիմք են հանդիսանում ծրագրի նախագծման և միջոցների բաշխման համար:

ԲԱԺԻՆ V

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հողված 25

Տարեկան զեկույցը

Հանձնաժողովն ուսումնասիրում է սույն Կանոնակարգի համաձայն նախաձեռնված միջոցների կիրառման մասով արձանագրված առաջընթացը և Եվրոպական հանձնաժողովին ու Խորհրդին է ներկայացնում Համայնքի օժանդակության իրականացման մասին տարեկան զեկույց: Այդ զեկույցը ներկայացվում է նաև Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին և Տարածաշրջանային կոմիտեին: Այն ներառում է նախորդ տարվան վերաբերող տեղեկություններ ֆինանսավորվող միջոցառումների, դիտանցման և գնահատման միջոցառումների արդյունքների, ինչպես նաև բյուջետային պարտավորությունների և վճարումների իրականացման մասին՝ ըստ երկրի, տարածաշրջանի և համագործակցության ոլորտի:

## Հողված 26

### Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:
2. Սույն պարբերությանը հղումների դեպքում կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները:  
  
1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է 30 օր:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:
4. ԵՆԲ-ի դիտորդը մասնակցում է կոմիտեի՝ Եվրոպական ներդրումային բանկին առնչվող հարցերի մասով իրականացվող աշխատանքներին:
5. Եվրոպական պառլամենտի հետ երկխոսությունը խթանելու նպատակով Հանձնաժողովը պարբերաբար տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին կոմիտեի աշխատանքների մասին և տրամադրում է համապատասխան փաստաթղթերը, ներառյալ՝ օրակարգը, միջոցառումների նախագծերը և ժողովների արձանագրությունները՝ 1999/468/ԵՀ որոշման 7(3) հոդվածի համաձայն:

## Հողված 27

### Հավելվածի ցանկում չներառված երրորդ երկրի մասնակցությունը

1. Համայնքի օժանդակության համահունչությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կարող է, 12-րդ հոդվածում նշված տեսակի գործողությունների ծրագրեր կամ 13-րդ հոդվածում նշված հատուկ միջոցներ ընդունելիս, որոշում կայացնել առ այն, որ այն երկրները, տարածքները և տարածաշրջանները, որոնք օգտվում են Համայնքի արտաքին օժանդակության այլ գործիքների և Եվրոպական զարգացման հիմնադրամի ներքո տրամադրվող օժանդակությունից, կարող են օգտվել նաև սույն Կանոնակարգով նախատեսված միջոցներից, եթե իրականացվող նախագիծը կամ ծրագիրը կրում է միջազգային, տարածաշրջանային կամ միջսահմանային բնույթ:
2. Ֆինանսավորման հնարավորության այս մեթոդը կարող է նախատեսվել 7-րդ հոդվածում նշված ռազմավարության փաստաթղթերում:
3. 14-րդ հոդվածի՝ մասնակցության իրավունքի վերաբերյալ դրույթները և 21-րդ հոդվածի՝ գնման ընթացակարգերում մասնակցության վերաբերյալ դրույթները համապատասխանեցվում են՝ շահագրգիռ երկրներին, տարածքներին կամ տարածաշրջաններին մասնակցության հնարավորություն ընձեռելու համար:

4. Համայնքի արտաքին օժանդակության տարբեր գործիքների դրույթների ներքո ֆինանսավորվող ծրագրերի դեպքում գնման ընթացակարգերին մասնակցելու հնարավորություն կարող է ընձեռնվել բոլոր այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք մասնակցության իրավունք ունեն տարբեր գործիքների շրջանակներում:

Հոդված 28

Համայնքի օժանդակության կասեցումը

1. Չհակասելով գործընկեր երկրների և տարածաշրջանների հետ գործընկերության և համագործակցության համաձայնագրերով, ինչպես նաև գործակցության համաձայնագրերով նախատեսված՝ աջակցության կասեցման վերաբերյալ դրույթներին՝ եթե գործընկեր երկիրը չի պահպանում 1-ին հոդվածում նշված սկզբունքները, Խորհուրդը կարող է Հանձնաժողովի առաջարկության հիման վրա ձայների որակյալ մեծամասնությամբ որոշում կայացնել սույն Կանոնակարգի ներքո գործընկեր երկրին տրամադրվող Համայնքի ցանկացած օժանդակության կապակցությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու մասին:

2. Նմանատիպ դեպքերում Համայնքի օժանդակությունը նախ և առաջ օգտագործվում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանմանը, ինչպես նաև գործընկեր երկրներում ժողովրդավարացմանն ուղղված միջոցների իրականացման հարցում ոչ պետական սուբյեկտներին աջակցելու նպատակով:

Հոդված 29

Ֆինանսական փաթեթը

1. Սույն Կանոնակարգի իրականացման համար նախատեսվող ֆինանսական փաթեթը 2007-2013 թվականներն ընկած ժամանակահատվածի համար կազմում է 11 181 000 000 եվրո, որը բաշխվում է հետևյալ կերպ՝

ա) ֆինանսական փաթեթի առնվազն 95%-ը հատկացվում է 6(1)(ա)(i) հոդվածում նշված մեկ և մի շարք երկրներ ընդգրկող ծրագրերին.

բ) ֆինանսական փաթեթի առնվազն 5 %-ը հատկացվում է 6(1)(ա)(ii) հոդվածում նշված միջսահմանային համագործակցության ծրագրերին:

2. Տարեկան հատկացումները կատարվում են բյուջետային մարմնի կողմից առկա ֆինանսական միջոցների սահմաններում:

Հոդված 30

Վերանայումը

Մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին և Խորհրդին է ներկայացնում առաջին երեք տարիների ընթացքում սույն Կանոնակարգի իրականացումը գնահատող զեկույց և, անհրաժեշտության դեպքում, այդ զեկույցում, ինչպես նաև 29(1) հոդվածում նշված ֆինանսական միջոցների բաշխման մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական առաջարկ:

### Հոդված 31

Ուժը կորցրած ճանաչելը

1. 2007 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվում թիվ 1762/92 (ԵՏՀ), 1734/94 (ԵՀ) և 1488/96 (ԵՀ) կանոնակարգերը:

2. Ուժը կորցրած ճանաչված կանոնակարգերը շարունակում են կիրառվել 2007 թվականին նախորդող բյուջետային տարիների իրավական ակտերի և պարտավորությունների նկատմամբ:

### Հոդված 32

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց 20 օր հետո:

Այն կիրառվում է 2007 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

Կատարված է Ստրասբուրգում, 2006 թվականի հոկտեմբերի 24-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ՝

Ժ. Բորել Ֆոնտելես

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Պ. Լեիթոմաքի

- 1) Եվրոպական պառլամենտի 2006թ. մայիսի 10–ի եզրակացությունը (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չի հրապարակվել) և Խորհրդի 2006թ. հոկտեմբերի 17–ի որոշումը:
- 2) ՊՏ թիվ C 46, 24.2.2006թ., էջ 1:
- 3) ՊՏ թիվ C 139, 14.6.2006թ., էջ 1:
- 4) ՊՏ թիվ L 184, 17.7.1999թ., էջ 23: Որոշումը՝ փոփոխված թիվ 2006/51 որոշմամբ (ՊՏ թիվ L 200, 22.7.2006թ., էջ 11):
- 5) ՊՏ, L 181, 1.7.1992թ., էջ 1: Կանոնակարգը՝ փոփոխված թիվ 2112/2005 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ, L 344, 27.12.2005թ., էջ 23):
- 6) ՊՏ L 182, 16.7.1994թ., էջ 4: Կանոնակարգը՝ վերջին անգամ փոփոխված Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2110/2005 (ԵՀ) հրահանգով (ՊՏ թիվ L 344, 27.12.2005թ., էջ 1):
- 7) ՊՏ թիվ L 189, 30.7.1996թ., էջ 1: Կանոնակարգը՝ վերջին անգամ փոփոխված թիվ 2112/2005 (ԵՀ) կանոնակարգով:
- 8) ՊՏ թիվ L 12, 18.1.2000թ., էջ 1: Կանոնակարգը՝ վերջին անգամ փոփոխված թիվ 2112/2005 (ԵՀ) կանոնակարգով:
- 9) ՊՏ թիվ L 210, 31.7.2006թ., էջ 25:
- 10) Դեռ հրապարակված չէ պաշտոնական տեղեկագրում:
- 11) ՊՏ թիվ L 248, 16.09.2002թ., էջ 1:
- 12) ՊՏ թիվ L 312, 23.12.1995թ., էջ 1:
- 13) ՊՏ թիվ L 292, 15.11.1996թ., էջ 2:
- 14) ՊՏ թիվ L 136, 31.05.1999թ., էջ 1:
- 15) ՊՏ թիվ L 210, 31.07.2006թ., էջ 82:

ՀԱՎԵԼՎԱԾ

1–ին հոդվածում նշված գործընկեր երկրները

Ալժիր

Հայաստան

Ադրբեջան

Բելառուս

Եգիպտոս

Վրաստան

Իսրայել

Հորդանան

Լիբանան

Լիբիա

Մոլդովա

Մարոկկո

Արևմտյան Աֆի և Գազայի հատվածի պաղեստինյան իշխանություն

Ռուսաստանի Դաշնություն

Սիրիա

Թունիս

Ուկրաինա